Հավելված
ՀՀ կառավարության 2015 թ.
մայիսի 21-ի նիստի N 22
արձանագրային որոշման

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի 2014 թվականի դրամավարկային քաղաքականության ծրագրի կատարման հաշվետվության (գնաճի հաշվետվության) մասին

2014 թվականի ընթացքում նպատակադրվել էր իրականացնել ընդլայնող հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականություններ, ինչը և այդ ուղղությամբ էլ ընթացել է մինչև տարեվերջ՝ որոշակի ճշգրտումներով: Այսպես, արտաքին հատվածում հիմնական հումքային և պարենային ապրանքների միջազգային շուկաներում սպասվածից ավելի գնանկումային զարգացումների և ՀՀ արժութային շուկայում տարեվերջին ստեղծված փոխարժեքային ճնշումների ներքո ՀՀ ԿԲ-ն վերանայեց դրամավարկային քաղաքականության ուղղությունը և կիրառվելիք միջոցառումները:

2014 թվականի համար ՀՀ ԿԲ կողմից վարվող դրամավարկային քաղաքականությունը դրսևորվեց ազդեցության երկու տարբեր ուղղություններով, նախ՝ ընդլայնող, ապա՝ զսպող: Նախ այն ուղղված էր խթանելու տնտեսական ակտիվությունը և որոշակիորեն ընդլայնելու տարվա սկզբում ձևավորված թույլ գնաճային միջավայրը, այնուհետև՝ ներքին և արտաքին տնտեսական զարգացումների ներքո 2014 թվականի տարեվերջին արտարժութային հոսքերի կտրուկ նվազման և ռուսական ռուբլու արժեզրկման ազդեցությամբ պայմանավորված դրամը արժեզրկվեց և ձևավորվեցին փոխարժեքային ճնշումներ, ինչով էլ պայմանավորված դրամավարկային քաղաքականություն իրականացնող մարմինը կիրառեց զսպող գործիքակազմ՝ ֆինանսական կայունության հասնելու համար:

Այսպես, 2014 թվականի մինչև չորրորդ եռամսյակ, ձևավորված մակրոտնտեսական միջավայրին համապատասխան, ՀՀ ԿԲ-ն վարել է ընդլայնող դրամավարկային քաղաքականություն՝ թուլացնելով և մեղմելով դրամավարկային պայմանները, համախառն պահանջարկի

ընդլայնմանը և գնաճի տեմպերի վերականգնմանը նպաստելու համար (իջեցնելով վերաֆինանսավորման տոկոսադրույքը ընդհանուր առմամբ 1 տոկոսային կետով): Սակայն, տարեվերջին ՀՀ ԿԲ-ն ճշգրտել է դրամավարկային քաղաքականության ուղղությունները և միջոցառումներն ուղղված են եղել ֆինանսական և արժութային շուկաներում ձևավորված լարվածության մեղմմանը, ինչով էլ պայմանավորված խստացվել են դրամավարկային պայմանները: Մասնավորապես նոյեմբերի վերջից բարձրացվեց լոմբարդային ռեպոյի տոկոսադրույքը (8.25-ից՝ 21.0%), և դեկտեմբերի կեսից բարձրացվեց արտարժույթով ներգրավված միջոցների դիմաց պարտադիր պահուստավորման նորման (12-ից՝ 24%):

Միաժամանակ, 2014 թվականի դրամավարկային քաղաքականության ծրագրի կատարման հաշվետվության (գնաճի հաշվետվության) որոշ բաժինների վերաբերյալ հայտնում ենք հետևյալը:

Գնաճի հաշվետվության մեջ 2014 թվականի չորրորդ եռամսյակի համար նշվում է, որ «ձևավորվեց դրական ՀՆԱ ճեղքվածք՝ նպաստելով գնաճի տեմպերի ակնկալվածից արագ վերականգնմանը»: Սակայն, 2014 թվականի չորրորդ եռամսյակում ՀՆԱ-ի աճի տեմպը ավելի ցածր է եղել, քան երրորդ եռամսյակում: Մասնավորապես, ՀՆԱ-ի իրական աճի տեմպը երրորդ եռամսյակում եղել է 5.3 տոկոս, չորրորդում՝ 2.6 տոկոս, ընդ որում մեծածախ ու մանրածախ առևտրի իրական աճը եղել է 2 տոկոս, իսկ չորրորդ եռամսյակում կազմել է 1.2 տոկոս: Այստեղից հետևում է, որ գնաճին նպաստել է ոչ թե ՀՆԱ-ի դրական ճեղքվածքը, այլ տնտեսական այլ գործոններ:

2014 թվականի ցուցանիշները կանխատեսված են գնահատականների հիման վրա, սակայն ՀՀ ԱՎԾ-ի կողմից փաստացի տվյալներն արդեն իսկ հրապարակված են, ինչով էլ պայմանավորված առկա են փաստացի տվյալներից շեղումներ (դրամավարկային ծրագրի պատրաստումը և հրապարակումը եղել է ավելի վաղ, քան որոշ մակրոտնտեսական ցուցանիշների մասով):

Մասնավորապես, գնաճի հաշվետվությունում նշվում է, որ 2014 թվականի տնտեսական աճը կգտնվի 3.2-3.5%-ի սահմաններում, երբ համաձայն ԱՎԾ տվյալների, 2014 թվականի տնտեսակայն աճը փաստացի կազմել է 3.4% կամ նշվում է, որ ըստ ԿԲ գնահատումների ՀՆԱ-ի դեֆլյատորը կազմում է 103.5%, երբ համաձայն ԱՎԾ տվյալների, 2014 թվականի ՀՆԱ-ի ինդեքս-դեֆլյատորը փաստացի կազմել է 102.4%: Իսկ 2014 թվականի

արդյունքներով հարկային եկամուտները կազմել են 1,064,118.4 մլն. դրամ, իսկ հարկեր/ՀՆԱ հարաբերակցությունը՝ 23.50%, փաստաթղթում նշված 23.4%-ի փոխարեն: